

տաձարապետի կամ հացերիցու մը¹, որոյ զերն ունի Գրաստամատ՝ Արշակայ ընթրեաց մէջ (աստ, 135), — յիշեալ բոլոր խորտիկները, պատրաստութեան կերպին համեմատ՝ որով կը լինէին «գալար եւ չոր», այս ինքն լոյժ կամ պինդ, առանձին ըսկառաակօք եւ կամ մեծ սկոտղներով (աստ, 63, 65) ի սեղան կը բերեն, կը բաշխեն առանձին փոքր սկտեղաց մէջ եւ «դնեն առաջի» կոչնականաց (Եղիշ. 173), — զորձ՝ զոր երբեմն տանուտէրն իսկ կ'ընէր, ինչպէս պիտի տեսնենք յաջորդ համարին մէջ: — Իսկ անոնք՝ դանակով եւ օգնութեամբ պատառարդիւն կամ մտակալիւն, զորս քաղաքակիրթ նրբութեամբ մ'ի ձեռին բռնած են (աստ, 60-1), պատառ պատառ կ'ընեն կերակուրը, եւ պատառաքաղով իրենց բերանը կը տանին:

Այս պահուն սպասաւորաց բազմութիւնն աշխուժիւ եւ արթնութեամբ կը ծառայեն բազմականաց, կանգնելով միշտ

1. Առաջինը զործածուած է ի Ծննդ. ԻԱ, 22. ԻԶ, 26, անկախաբար յն. հարսնածուէն. եւ ի ԶԵ. Բ, 8, 9 արմատակից է յունարենին: Իսկ երկրորդն՝ ի Գատ. ԺԳ, 20, Սամիսոնի հարսանեաց առթիւ՝ այսպէս, «ընդ հացերիցուս նորա», փոխան յն. «ընդ միում ի բարեկամաց նորա». որով չի կրնար զահերէց իմացուիլ, այլ հումանիշ տաճարապետին: Երկուրն ալ սակայն, դասելով իրենց կազմէն, չեն պահանջեր լոկ հարսանեաց հետ կապուիլ: